ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Վարսիկ Ասրյանը,Արմեն Ջուլհակյանը,Հայկ Մարիկյանը, Անդրանիկ Տոնոյանը,Ատոմ Գագինյանը, Աղունիկ Նալբանդյանը, Լևոն Պապյանը, Արմեն Դավթյան, Արծրուն Հակոբյան

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Գևորգ Մանուկյան, Սամվել Անտոնյան, Արթուր Սավթալյան, Լուսինե Հովհաննիսյան,Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Անուշ Կիրակոսյան, Գայանե Ղալաչյան, Մարիամ Մանուկյան, աշխատակիցներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար ՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 2 հարց:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի վեցերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ- 11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է"

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 139-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2025 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 55-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՆԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑ 1 ՏՈՒՆ 5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Արմանիս վարչական բնակավայրի բնակիչ Արման Անտոնյանը և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի «Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» ՀՈԱԿ-ի՝ տնօրեն Արտակ Սաքանյանը խնդրելով մարզադպրոցի սան՝ Համլետ Անտոնյանին աջակցել, որպեսզի Իտալիայի Վենետիկ քաղաքում մասնակցի Եվրոպայի ազատ ոճի ըմբշամարտի առաջնությանը, ճանապարհավճարի և կեցության համար անհրաժեշտ է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ըմբշամարտի մարզիկ Համլետ Անտոնյանի ծնողին՝ Արման Անտոնյանին, որդու Եվրոպայի ըմբշամարտի ազատ ոճի առաջնությանը մասնակցելու համար հատկացնել 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ճանապարհավճարի և կեցության համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 56-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ԻՆ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Հիմք ընդունելով 17.06.2025թ. N 17062025-06-0024, 12.06.2025թ. N 12062025-06-0051, 12.06.2025թ. N 12062025-06-0014, 12.06.2025թ. N 12062025-06-0012, 11.06.2025թ. N 11062025-06-0083, 11.06.2025թ. N 11062025-06-0093, 06.06.2025թ. N 06062025-06-0057, 06.06.2025թ. N 06062025-06-0073, 06.06.2025թ. N 06062025-06-0052, 06.06.2025թ. N 06062025-06-0018, 28.04.2025թ. N 28042025-06-0014, 11.06.2025թ. N 11062025-06-0084, 12.06.2025թ. N 12062025-06-0041, 14.05.2025թ. N 14052025-06-0043, 02.06.2025թ. N 02062025-06-0119, 30.05.2025թ. N 30052025-06-0012, 02.06.2025թ. N 02062025-06-0108, 30.05.2025թ. N 30052025-06-0042, 29.05.2025թ. N 29052025-06-0050, 29.05.2025թ. N 29052025-06-0045, 05.06.2025թ. N 05062025-06-0082, 24.06.2025թ. N 24062025-06-0050, 25.06.2025թ. N 25062025-06-0052, 21.06.2025թ. N 21062025-06-0002 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 213, 215 և 216 հոդվածներով, Հայաստանի

Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական նպատակային նշանակության, անտառային նպատակային նշանակության և ջրային նպատակային նշանակության ներքոհիշյալ հողամասերը սերվիտուտի իրավունքով խողովակաշար անցկացնելու համար՝ մինչև 2124 թվականը տրամադրել «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ին.

1. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0036 կադաստրային ծածկագրի, 0.23667 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 47334 /քառասունյոթ հազար երեք հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ

2. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0034 կադաստրային ծածկագրի, 0.10387 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 20774 /քսան հազար յոթ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ

3. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0033 կադաստրային ծածկագրի, 0.17886 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 35772 /երեսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ

4. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0030 կադաստրային ծածկագրի, 0.14627 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 29254 /քսանինը հազար երկու հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ

5. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0029 կադաստրային ծածկագրի, 0.02314 հա բնակավայրերի նպատակային նշանակության,

ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 4628/ չորս հազար վեց հարյուր քսանութ/ ՀՀ դրամ

6. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0028 կադաստրային ծածկագրի, 0.00688 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 1376/ մեկ հազար երեք հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ

7. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0026 կադաստրային ծածկագրի, 0.09437 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 18874 /տասնութ հազար ութ հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ

8. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0027 կադաստրային ծածկագրի, 0.10533 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 21066 /քսանմեկ հազար վաթսունվեց / ՀՀ դրամ

9. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0038 կադաստրային ծածկագրի, 0.00301 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 602 /վեց հարյուր երկու / ՀՀ դրամ

10. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0032 կադաստրային ծածկագրի, 0.01191 հա բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 2382 /երկու հազար երեք հարյուր ութսուներկու / ՀՀ դրամ

11. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0023 կադաստրային ծածկագրի, 0.3237 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 64740 /վաթսունչորս հազար յոթ հարյուր քառասուն / ՀՀ դրամ

12. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0021 կադաստրային ծածկագրի, 0.04807 հա գյուղատնտեսական նպատակային

նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 9614/իննը հազար վեց հարյուր տասնչորս / ՀՀ դրամ

13. Ստեփանավան համայնքի Ուրասար գյուղում գտնվող 06-106-0133-0009 կադաստրային ծածկագրի, 0.06455 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 12910 /տասներկու հազար իննը հարյուր տասը / ՀՀ դրամ

14. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0031 կադաստրային ծածկագրի, 0.24387 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 48774 / քառասունութ հազար յոթ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ

15. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0035 կադաստրային ծածկագրի, 0.03986 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 7972 /յոթ հազար իննը հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ

16. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0025 կադաստրային ծածկագրի, 0.1143 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 22860 / քսաներկու հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ

17. Ստեփանավան համայնքի Ուրասար գյուղում գտնվող 06-106-0133-0010 կադաստրային ծածկագրի, 0.13091 հա անտառային նպատակային նշանակության, թփուտ գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 26182 / քսանվեց հազար մեկ հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ

18. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-0519-0019 կադաստրային ծածկագրի, 0.11788 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 23576/ քսաներեք հազար հինգ հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ

19. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0015 կադաստրային ծածկագրի, 0.0284 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 5680/ հինգ հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ

20. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0020 կադաստրային ծածկագրի, 0.02859 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 5718/ հինգ հազար յոթ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ

21. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0018 կադաստրային ծածկագրի, 0.0405 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 8100/ ութ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ

22. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0016 կադաստրային ծածկագրի, 0.00514 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 1028 / մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ

23. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0017 կադաստրային ծածկագրի, 0.01766 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 3532 /երեք հազար հինգ հարյուր երեսուներկու / ՀՀ դրամ

24. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0024 կադաստրային ծածկագրի, 0.14925 հա ջրային նպատակային նշանակության, գետեր գործառնական նշանակության հողամասը, տարեկան վարձավճար սահմանել 29850/ քսանիննը հազար ութ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ

2. «ՍՏԵՓԶՈՐ-1» ՍՊԸ-ի հետ սահմանված կարգով կնքել սերվիտուտի պայմանագիր՝ 99 տարի ժամկետով:

3. Արգելել սերվիտուտի իրավունքով տրամադրվող հողամասը օգտագործել այլ նպատակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 57-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ

ՄԱՍԻՆ ԵՎ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.05.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 40-Ա ՈՐՈՇՈՒՄԸ *(ՀԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
    - Արմեն Գրիգորյան- Ստեփանավան համայնքի ղեկավար՝ հանձնաժողովի նախագահ,
    - Անուշ Կիրակոսյան- Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ՝ աճուրդավար,
    - Մարիամ Մանուկյան- Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժ/պ՝ արձանագրող,
    - Լևոն Քալանթարյան- Ստեփանավան համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,
    - Արսեն Ավագյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ՝ հանձնաժողովի անդամ,
    - Էլմիրա Ռևազյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ հանձնաժողովի անդամ
    - Արթուր Սավթալյան-Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,
    - Գևորգ Մանուկյան-Ստեփանավան համայնքի Ուրասար վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,

- Սամվել Անտոնյան-Ստեփանավան համայնքի Արմանիս վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,
- Վանո Հակոբյան- Ստեփանավան համայնքի ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,
- Ջոն Կիրակոսյան-Ստեփանավան համայնքի ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 07.05.2025 թվականի թիվ 40-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 58-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԳՈՒՄԱՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ՀԱՄՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մամբրե քահանա Ոսկանյանը Սուրբ Սարգիս եկեղեցուն նվիրատվություն կատարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր սպասավոր Տեր Մամբրե քահանա Ոսկանյանի կողմից ներկայացված 24.06.2025թ. թիվ 1433 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածի Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցուն նվիրաբերել՝ 950000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավան համայնքի Դեսինի փողոց թիվ 36/8 հասցեի բնակիչ Ադա Գալստյանը (ծնված 03.08.1980թ. անձնագիր՝ AU 0534815): Վերջինիս քրոջ որդու՝ Ռուբիկ Գալստյանի մոտ՝ ծնված 02.01.1996թ..-ին, հայտնաբերվել է սուր լեյկոզ: Քրոջ որդու առողջական խնդրի պատճառով ընտանիքը հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում: Դրամական աջակցությունը անհրաժեշտ է բուժման ծախսերը հոգալու համար:

Հիմք ընդունելով Ադա Գալստյանի կողմից ներկայացված 23.06.2025թ. թիվ 1409 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածի Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 11.09.2025թ. ժամը 14^{30} ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ Փ.

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՎԱՆՈ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հանմիկ Մովսիսյանը _____